ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2

09 սեպտեմբերի 2024 թվական

Տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու Ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակութային և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 04 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը, Հրայր Ասատրյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, տուրիզմի, սպասարկման բաժնի պետի կողմից ներկայացված «ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ավագանու հերթական նիստում:

Նիստում քննարկվեց Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի մանրամասները, աշխարհագրությունը, ինչպես նաև խոսվեց ԳՄՀԸ-ի կողմից համաֆինանսավորման մասին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի **Խոյ համայնքի ավագանու** Ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակութային և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Տալ համաձայնություն Խոյ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին :

2. Տալ համաձայնություն համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար 20 % համաֆինանսավորում հատկացնելուն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Լիլիթ Ենգիբարյան

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Աննա Գևորգյան

ԱՆԴԱՄՆԵՐ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Իրինա Սիրունյան

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ

Հրայր Ասատրյան